Հավելված 1

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թ. տարեկան հաշվետվության

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

2021 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

0054, Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8, էլ. փոստ՝

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով Տեսչական մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ,
2. գործընթացի չափորոշիչներ,
3. արդյունքի չափորոշիչներ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը.

Չափորոշիչը գնահատելու համար յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակի գնահատումը կատարվում է հաշվետու ժամանակահատվածում

իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտի ստուգումները և վերահսկողությունը չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, վերջիններս կարգավորվում են «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքներով, ուստի այս ոլորտի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայության և գնահատման հաշվարկ չի կատարվել:

2021 թվականին Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը 0.2 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0,2,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,4,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,1,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0,05:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0,2	0,2
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	0,3	0,4
3	Տրանսպորտի անվտանգության	0,1	0,1

4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	0,05	0,05

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը.

Չափորոշիչը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարի և վերահսկողության ընթացքում նախատեսված ստուգաթերթերի ընդհանուր կշիռների հանրագումարի հարաբերությամբ:

2021 թվականին տեսչական մարմնի ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը 0.2 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.2,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0.4,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0.1,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.04:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0,2	0,2
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	0,3	0,4
3	Տրանսպորտի անվտանգության	0,1	0,1
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	0,05	0,04

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

2021 թվականին ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար աշխատանքներն իրականացրել են Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության հաստիքացուցակով նախատեսված 7 աշխատակիցներից 6-ը, մեկ հաստիք դեռևս համալրված չէ:

Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար լրացուցիչ մարդկային ռեսուրսներ և ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցառումներն իրականացվել են համապատասխան ոլորտային ստորաբաժանումների, ինչպես նաև իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների միջոցով:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից ֆինանսական լրացուցիչ միջոցներ չեն հատկացվել:

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը.

2021 թվականի ընթացքում ՀՀ կառավարությանը ներկայացվել են թվով 7 առաջարկներ, որոնցից 3-ը վերաբերվել են տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտին, 3-ը՝ տրանսպորտի անվտանգության ոլորտին, իսկ 1-ը՝ քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտին:

2020 թվականի ընթացքում կատարված առաջարկների թիվն ըստ որորտների հետևյալն է. տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 1, Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողությանոլորտ՝ 2, Տրանսպորտի անվտանգությանոլորտ՝ 3, քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 2, գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 1:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը.

Չափորոշիչը գնահատելու համար վերլուծվել է հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների միջին տևողությունը:

2021 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացրած ստուգումների միջին տևողությունը 1.5 օր է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 3.1,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 1.6,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 2.8:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	2,07	3. 1
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	0	0
3	Տրանսպորտի անվտանգության	0	0
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	0	1. 6
5	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության	1,8	2,8

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ.

Չափորոշչի գնահատման համար վերլուծվել է բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի և Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում նույն ժամանակահատվածում ընդգրկված և իրականացված ստուգումների քանակի հարաբերությունը:

2021 թվականին բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ 0.9 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 1,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 1,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0.6,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 1:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	1	1
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	1	1
3	Տրանսպորտի անվտանգության	1	0,6
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	1	1

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը.

Հաշվարկվել է ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ընդհանուր տևողության և դրանց քանակի հարաբերությամբ:

2021 թվականին ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմել է 6 օր: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 3.5,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 6.2,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 4,0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 7,0,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 9.3:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	**2021թ.**
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	2,9	3. 5
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	3,7	6,2
3	Տրանսպորտի անվտանգության	5,4	4,0
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	5,5	7,0
5	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության	10	9,3

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.

2021 թվականին տեսչական մարմնի կողմից ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակը (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) 0.12 է։

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.08,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.06,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 1.5։

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0	0.08
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	0	0
3	Տրանսպորտի անվտանգության	0	0
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	0	0.06

5	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության	0	1,5

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.

Չափորոշչի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով չափորոշչում նշված հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքները:

2021 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

2020 թվականի ընթացքում նշված հարցերի վերաբերյալ տեսչական մարմնի դեմ դիմում-բողոքներ ևս չեն ներկայացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը.

2021 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերությունը 0.4 է: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ 0.2,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ 0,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ 0,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ 0.1,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ 1.7:

	ՈԼՈՐՏ	ՑՈՒՑԱՆԻՇ (%)	
		2020թ.	2021թ.
1	Տեխնիկական և հրդեհային անվտանգության	0,1	0,2
2	Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության	0	0
3	Տրանսպորտի անվտանգության	0	0
4	Քաղաքաշինության անվտանգության ապահովման	0	0,1
5	Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության	8	1,7

3.2) Տեսչական մարմնի վերահսկման բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը.

Չափորոշիչը հնարավոր կլինի գնահատել Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում ստուգվող օբյեկտների և/կամ սուբյեկտների վերաբերյալ բազաների վերջնական ձևավորման, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններից տեղեկատվության էլեկտրոնային բազաներին

առցանց հասանելիության տեխնիկական և/կամ իրավական վերջնական լուծումների առկայության դեպքում:

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով.

2021 թվականին իրականացված ստուգումներին միջինում 1 ստուգման համար հատկացվել է 50.9 հազ. դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1.9 աշխատակից: Նույն ցուցանիշն ըստ ոլորտների հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 17.9 հազ. դրամ, 1 ստուգմանը մասնակցել է 1.1 աշխատակից,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 22.0 հազ. դրամ, 1 ստուգմանը մասնակցել է 1 աշխատակից,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 37.6 հազ. դրամ, 1 ստուգմանը մասնակցել է 3.7 աշխատակից,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ միջինում հատկացվել է 32.9 հազ. դրամ, 1 ստուգմանը մասնակցել է 3.5 աշխատակից,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 265,4 հազ. դրամ, 1 ստուգմանը մասնակցել է 2,5 աշխատակից:

3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տրանսպորտի անվտանգության ոլորտ.

2021 թվականին վերադասության կարգով բողոքարկվել է 22 վարչական ակտ, որոնցից 20-ով բողոքները չեն բավարարվել և վարչական ակտերը մնացել են անփոփոխ, 1-ով որոշում է կայացվել որոշումը բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ը՝ ընթացիկ լուծման փուլում է:

Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ.

2021 թվականի ընթացքում վերադասության կարգով բողոքարկվել է 14 վարչական ակտ, որից 10-ով որոշում է կայացվել կայացված վարչական ակտերն անփոփոխ թողնելու մասին, իսկ 3-ով՝ կայացված որոշումները բեկանելու և վարչական գործի վարույթը կարճելու մասին, 1-ով՝ վարչական վարույթն ընթացքում է:

Քաղաքաշինության անվտանգության ոլորտ.

2021 թվականին քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 2 վարչական ակտ, որոնցից 1-ով բողոքը չի բավարարվել և վարչական ակտն անփոփոխ է մնացել, 1-ով՝ վերադաս վարչական վարույթը գտնվում է քննության փուլում:

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տրանսպորտի անվտանգության ոլորտ.

2021 թվականին ներկայացվել է 22 հայցադիմում: 13 հայցապահանջներ բավարարվել են, 2 հայցադիմումների վարույթ ընդունելը մերժվել է, 1 հայցադիմում վերադարձվել է: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է 4 վերաքննիչ բողոք, քաղաքացու կողմից՝ 1 վերաքննիչ բողոք: Ընթացիկ փուլում գտնվում են 26 վարույթ ընդունված դատական գործեր:

Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ

2021 թվականի ընթացքում ներկայացվել է 1 հայցադիմում, որը գտնվում է դատական քննության փուլում: Ընթացիկ փուլում առկա են նախկին տարվանից քննվող ևս 2 դատական գործ:

Տեխնիկական անվտանգության բնագավառում

Նշված բնագավառում ներկայացվել է 42 հայցադիմում: 16 հայցապահանջներ բավարարվել են, 8-ը մերժվել, իսկ 2-ով՝ դատական գործի վարույթները կարճվել են: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են 6 վերաքննիչ բողոքներ, տնտեսավարող սուբյեկտների կողմից՝ 6-ը: Ընթացիկ փուլում գտնվում են 42 դատական գործեր:

Քաղաքաշինության անվտանգության ոլորտ.

2021 թվականին ներկայացվել է 3 հայցադիմում: 6 հայցապահանջներ բավարարվել են, 1 դատական գործի վարույթը կարճվել է: Ընթացիկ փուլում գտնվում է 6 դատական գործ:

Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ

2021 թվականին ներկայացվել է 8 հայցադիմում: Կայացված 4 վճիռներով հայցերը մերժվել են, 1 դատական գործով որոշում է կայացվել գործի վարույթը կարճելու մասին, 1 հայցադիմումի վարույթ ընդունելը մերժվել է: Ընթացիկ փուլում գտնվում են 12 դատական գործեր:

2020թ-ի տարեկան ամփոփ

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածում ստուգման համար հատկացված ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշներով.

2020 թվականին իրականացված ստուգումներին միջինում հատկացվել է 34,1 հազ. դրամ, և միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,79 աշխատակից։ Նույն ցուցանիշն, ըստ ոլորտների, հետևյալն է՝

1. Տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 9,0 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,3 աշխատակից,
2. Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 38,8 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1 աշխատակից,
3. Տրանսպորտի անվտանգության ոլորտ՝ միջինում հատկացվել է 46,2 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,66 աշխատակից,
4. Քաղաքաշինության անվտանգության ապահովման ոլորտ՝ միջինում հատկացվել է 19,8 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 1,27 աշխատակից,
5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության ոլորտ՝ միջինում հատկացվել է 56,9 հազ. դրամ, միջինում 1 ստուգմանը մասնակցել է 2,72 աշխատակից։

3.4) Տեսչական մարմնի, տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները.

Տես՝ կետ 2.

2. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները, տեղեկատվություն դատարանների կողմից վարույթ ընդունված գործերի մասին։

<u>Տրանսպորտի անվտանգության բնագավառում</u> 12 վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով, 12 դեպքում էլ կայացված վարչական ակտերը թողնվել են անփոփոխ։

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 2 վարչական ակտ բողոքարկվել է, որը քննության արդյունքում վարչական ակտերը մի մասով կարճվել, իսկ մի մասով՝ թողնվել են անփոփոխ:

Տեխնիկական անվտանգության բնագավառում 11 վարչական ակտ բողոքարկվել է, որոնցից 9-ը թողնվել է անփոփոխ, 1-ը՝ կարճվել, քանի որ բողոքարկվել է միաժամանակ և՛ դատական, և՛ վերադասության կարգով,

1-ը՝ կարճվել է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, համաձայն որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Բողոքները վերաբերվել են արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

Քաղաքաշինության բնագավառում վերադասության կարգով բողոքարկվել է 7 վարչական ակտ, բոլորը կարճվել են:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տրանսպորտի անվտանգության բնագավառում 33 հայցադիմում է ներկայացվել: 19 դատական գործով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, որից 5-ով վերաքննիչ բողոք է ներկայացվել:

Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում 1 հայցադիմում է ներկայացվել: Դատարանը Տեսչական մարմնի դեմ 1 վճիռ է կայացրել, բողքարկվել է վերաքննիչ դատարան, գտնվում է ընթացիկ փուլում:

Տեխնիկական անվտանգության բնագավառում 24 հայցադիմում է ներկայացվել, որոնցից 4-ով վճիռ է կայացվել Տեսչական մարմնի դեմ, վերաքննիչ դատարան բողոքարկվել 1 դատական ակտ:

Քաղաքաշինության բնագավառում ընդհանուր թվով 10 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի դեմ վճիռ չի կայացվել, 1-ի՝ վարույթ ընդունելը մերժվել է:

Գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում 8 հայցադիմում է ներկայացվել, որոնցից Տեսչական մարմնի օգտին կայացվել է 3 վճիռ, վերաքննիչ դատարան բողոքարկվել է 3 դատական ակտ որոնք կայացվել են Տեսչական մարմնի օգտին:

0054, Երևան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8, էլ. փոստ՝